



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
« **ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ**»



*[Signature]* Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«20» 03 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 20

**Ձեռնարկողը՝**

**«ԲՈՆԱՆՈ» ՍՊԸ**

22 Կոտայքի մարզ, ք. Արովյան  
Երիտասարդական փ. ¼ բն. 9

**Գործունեությունը՝**

**Ստեփանավանի հանքային դաշտի Կյուրեղ լեռան  
քվարցիտների երևակման փարածքում 2018թ ընթացքում  
երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա  
միջավայրի վրա ազդեցության նախնական  
գնահատման հայտ**

«Լոռու մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝



*[Signature]* Ա. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 20

«20» 03 2018թ.

**ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի հանքային դաշտի Կյուրեղ լեռան քվարցիտների երևակման տարածքում 2018թ. ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	<<Բոնանո>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ, կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	<Գ> կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ Լոռու մարզ

Հանքերևակումը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Ստեփանավան քաղաքից 7կմ, իսկ Արմանիս գյուղից՝ 2կմ դեպի հարավ-արևմուտք: Տեղամասը զբաղեցնում է մոտ 11.6հա մակերես:

Շրջանի կլիման մեղմ է, խոնավ, ինչով բացատրվում է տեղանքի ջրային ցանցի ջրառատությունը: Տեղումների միջին տարեկան քանակությունը կազմում է 657.7մմ:

Հանքերևակման հետազոտման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնված օգտակար հանածոյի մարմինների ձևաբանությունը, տեղադրումը, դիրքը, տեղամասի երկրաբանական կառուցվածքը, երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները, տեղամասի չափերը, ռելիեֆի ձևն ու մերկացվածության աստիճանը և այլն:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության քվարցիտների 2 մարմինները բնութագրվում են որպես 45° և 50° անկմամբ շերտաձև մարմին:

Տեղանքի թեք ռելիեֆի և տարածքի բավարար մերկացվածության պայմաններում քվարցիտների շերտաձև մարմնի հետախուզումը նախատեսվում է իրականացնել մաքրվածքների և փորձնական բացահանքերի անցման և նմուշարկման միջոցով: Արդյունաբերական կարգերով պաշարների եզրագծման համար հետախուզագծերի վրա փորվածքների միջև հեռավորությունը B կարգի պաշարների եզրագծման համար ընդունված է 50-120մ:

Օգտակար հաստվածքի երկու շերտաձև մարմինների տարածական դիրքը ճշտելու, նմուշարկելու և հիմնատակվող ու ծածկող նստվածքային շերտերի հպումները քարտեզագրելու նպատակով նախատեսվում են անցնել էլյովիալ-դելյովիալ առաջացումները հատող մինչև 1.0մ խորությամբ 6-ական մաքրվածքներ յուրաքանչյուր մարմնի համար, 20-50մ երկարությամբ, ընդհանուր 400մ: Նախատեսվում է կատարել փորձնական հանույթ՝ հումքի տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրման նպատակով, յուրաքանչյուր մարմնից 150մ<sup>3</sup>, ընդհանուր՝ 300մ<sup>3</sup> ծավալով:

Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման համար նախատեսվում է կատարել տեղամասի 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ 12հա տարածքի վրա:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները և փորձնական բացահանքերը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների.

- մաքրվածքների փաստագրում – 400մ;
- փորձնական բացահանքերի փաստագրում – 2 հատ:

Նմուշարկումն իրականացվելու է մաքրվածքներից և փորձնական բացահանքերից:

Օգտակար հանածոյի նյութական կազմը և տեխնոլոգիական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- ակոսային նմուշների վերցնում –յուրաքանչյուր մաքրվածքից 2 նմուշ, ընդամենը 24 նմուշ և 3 ստուգիչ նմուշ(ընդհանուր 27 նմուշ),

- բացահանքերից տեխնոլոգիական 2 նմուշ՝ 300 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով:

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական չափումներ՝ օգտակար հանածոների ճառագայթափնդիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Վերցված բոլոր նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների ու փորձարկումների: Նախատեսվում են բոլոր 27 նմուշների քիմիական կազմի որոշում:

Նախատեսվում է հետազոտման ենթարկել 12 մենաքարային (յուրաքանչյուր հետախուզական փորվածքից 1 նմուշ) և 2 համախառը նմուշներ:

Լեռնային զանգվածից արդյունաբերական հանքաքարի որակի որոշման համար նախատեսվում է 2 փորձնական բացահանքերի անցում 10x5x3մ չափերով՝ 150-ական մ<sup>3</sup> ծավալով: Վերջիններից կկազմվի 2 նմուշ, որոնք տեխնոլոգիական փորձարկումների նպատակով կառաքվեն որևէ գործող գործարան:

Նախատեսվում է հետախուզվող տեղամասում կատարել 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 12 հա ընդհանուր տարածքի վրա, բոլոր հետախուզական փորվածքների և բնական մերկացումների գործիքային տեղադրմամբ տոպոհիմքի վրա:

Տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հետախուզական փորվածքների անցման ընթացքում, ինչպես նաև տեղամասի հարևան տարածքների տեղազննում գեոդինամիկ երևույթների առկայության պարզաբանման նպատակով: Նման երևույթների առկայության կամ ջրատար հորիզոնների հայտնաբերման դեպքում կիրականացվի դրանց ուսումնասիրում մասնագիտացված կազմակերպության կողմից:

Բուսահողային շերտը գործնականում բացակայում է: Հետախուզական մաքրվածքներից հեռացված զանգվածն ենթակա է հետ վերադարձման հանված տարածքներ և պետք է կատարվի ամրացում-նստեցում /տրամբովկա/: Փորվածքների ընդհանուր 400մ երկարության վրա հեռացված և հետ լցվող ապարների ծավալը կկազմի մոտ 200մ<sup>3</sup>:

Նախագծով նախատեսված հիմնական աշխատանքներին գույրնթաց իրականացվելու է ապարների ռադիոակտիվության ուսումնասիրություններ:

Բոլոր լեռնային փորվածքները ենթարկվելու են  $\gamma$ -պրոֆիլացման: Դիտարկման կետերի ֆիքսումն իրականացվելու է համաձայն գործող նորմերի: մաքրվածքներում և բացահանքերում 2 կետ 1մ<sup>2</sup> վրա:

Դաշտային աշխատանքների ընթացքում պարբերաբար (15-20 օրը մեկ) նախատեսվում է իրականացնել ռադիոչափերի էտալոնացում և զգայունության ստուգում:



Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման ծրագիր՝ կապված օդի, ջրի, հողի, բուսական և կենդանական աշխարհի վրա նախատեսված աշխատանքների հնարավոր հետևանքների փաստման համար, երեք ամիս պարբերականությամբ :

Տեղամասում հատուկ պահպանվող տարածքներ, սողանքներ չկան : Ուսումնասիրությունների տարածքի սահմաններում բնության և մշակութային հուշարձաններ նույնպես չկան : Հայցվող տեղամասը գտնվում է պատմության և մշակույթի հողերից ավելի քան 1.5կմ հեռավորության վրա:

Ուսումնասիրման տարածքի հեռավորությունը պատմության, մշակութային օբյեկտներից թույլ է տալի ենթադրել, որ հանքերակման ուսումնասիրումը չի կարող որևէ կերպ անդրադառնալ պատմամշակութային հուշարձանի իրավիճակի վրա:

Տեղամասի տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում առաջանում են վնասակար գազեր և փոշի: Նախնական հաշվարկների համաձայն, տարածքում վնասակար գազերի առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի նորմերը: Զրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում գրունտային ջրերը բացակայում են:

Երևական տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներից առաջ կատարվելու է հողաբուսական շերտի կուտակում նախատեսված վայրում: Խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնումը իրականացվելու է երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո:

Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Տրանսպորտային միջոցների աշխատանքի ժամանակ հնարավոր են ծխազագերի և անօրգանական փոշու արտանետումներ, որոնց նվազեցման համար նախատեսվում է իրականացնել մեքենաների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ, շարժիչների աշխատանքի կարգավորում, տեղադրել զտիչներ արտանետման խողովակի վրա:

- Օգտագործված յուղերի և քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:

- Հնամաշ դետալների և մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:

- Կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:

- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:

- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

- Մթնոլորտային օդում կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, տարին երկու անգամ հաճախականությամբ: Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին չորս անգամ հաճախականությամբ:

Երկրաբանական աշխատանքների ընթացքում հողերի աղտոտումը կանխարգելելու, ինչպես նաև լեռնային փորվածքներով խաթարված տարածքները ռեկուլտիվացման համար իրականացվում է ռեկուլտիվացման աշխատանքներ: Տվյալ դեպքում մաքրվածքների անցումից հետո ռեկուլտիվացման աշխատանքները կիրականացվեն հաշվի առնելով



հողաբուսական շերտի բացակայությունը: Մաքրվածքներից հանված մոտ 200մ<sup>3</sup> լեռնային զանգվածը հետ կվերադարձվի փորվածքների մեջ և կամրացվի: Բացահանքերի տարածքները կհարթեցվեն աշխատանքի ընթացքում և ռեկուլտիվացիայի ենթակա չեն, քանի որ մակաբացման ապարները բացակայում են:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 250.000 դրամ:

### **ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ**

Այսպիսով երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Պուշկինո բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումների և սոցալ-տնտեսական ծրագրի պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:

3. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինադրի (կենցաղային ադրի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, ջրի, օդի վերահսկման աշխատանքներ, և արդյունքները ներառել մոնիտորինգի պլաններում:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«ԲՈՆԱՆՈ» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի հանքային դաշտի Կյուրեղ լեռան քվարցիտների երևակման տարածքում 2018թ. ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Ձ. Զուռնայան